

**«ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՆՈՆՆԵՐԸ  
ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

**2025թ.-ից կրկնողաբար, ք. Երևան («Իզմիրյան» ԲԿ)**

**ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային  
ինստիտուտ» ՓԲԸ**

- Թիրախային լսարան՝ լաբորանտներ, լաբորատորիայի բուժքույրեր
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-15 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՁ 10 տեսական և 5 գործնական կրեդիտ.  
դասավանդող Վահագն Գևորգյանին՝ ՇՄՁ 10 տեսական և 5 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 010235310

<b>Շաբաթ 1</b>	
<b>Օր 1՝ երկուշաբթի</b>	
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Ի՞նչ է կենսաանվտանգությունը լաբորատորիայում: Ձևակերպում: Նրա բաղադրիչ մասերը:
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Լաբորատոր վտանգներ, սպառնալիքներ և ռիսկեր: Ռիսկերի կառավարում, ռիսկերի նվազեցման մեխանիզմներ, դրանց կիրառման արդյունավետության գնահատում
1 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Անցկացնել վարժանք, ցույց տալ ինչն է հանդիսանում վտանգը, ինչպես է այն դառնում ռիսկի գործոն և ինչ միջոցներով կարելի է այն կառավարել
<b>Օր 2՝ երեքշաբթի</b>	
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Լաբորատոր կենսաանվտանգության մակարդակներ՝ մոտեցումներ և բնորոշումներ: Ախտահանում և վարակազերծում: Գործող նորմատիվ ակտեր, հրահանգներ
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Անհատական պաշտպանիչ միջոցներ: Շնչուղիների պաշտպանության ծրագիր
1 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Անցկացնել պրակտիկ վարժանք ախտահանիչ նյութերի պատրաստման և կիրառման պահանջների համաձայն
<b>Օր 3՝ չորեքշաբթի</b>	
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Պատահարների և դեպքերի կառավարում: Գործողություններ արտակարգ իրավիճակներում

1 ժամ	<b>Դասախոսություն</b> Արյան միջոցով փոխանցվող վարակներ, կենսաբանական ռիսկերի բնութագրում և գնահատում
1 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Ցույց տալ որ գործոնները կլինիկական լաբորատորիայում կարող են հանդիսանալ կենսաբանական ռիսկի աղբյուր /արյուն, մեզ, այլ կենսանյութ/ և ինչպես պետք է վարվել նրանց ընդունման և հետազոտման փուլերում
<b>Շաբաթ 2</b>	
<b>Օր 1՝ երկուշաբթի</b>	
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Լաբորատոր հետազոտությունների նախաանալիտիկ փուլ: Նմուշների կառավարում՝ նմուշառման, փաթեթավորման, տեղափոխման կանոններ
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Երակային արյան նմուշառման /ֆլեբոտոմիայի/ կանոններ՝ մաշկի մշակում, նմուշների վերցման հերթականություն, պահպանման և կիրառման ժամկետներ
1 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Ցույց տալ թե ինչպես է կատարվում նմուշառումը ըստ քայլերի /պացիենտի ընդունում, գրանցում, արյան նմուշների ստացում/, հետնմուշառման փուլ
<b>Օր 2՝ երեքշաբթի</b>	
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Արյան, հյուսվածքների և օրգանիզմի այլ հեղուկների հետ աշխատանքի անվտանգության կանոններ: Կենսաբանական թափոնների կառավարում և վնասազերծում
1 ժամ	<b>Դասախոսություն</b> Լաբորատոր սարքավորումների անվտանգ շահագործում
1 ժամ	<b>Գործնական աշխատանք</b> Անցկացնել վարժանք թափոնների տարանջատման, մակնշման և հետագա կառավարման վերաբերյալ

Դասավանդող՝ Վահագն Գևորգյան: